# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

## 14.08.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/6 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան

20.11.2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս տնօրեն Լ.Պողոսովայի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 14.08.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-17/6 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5-րդ և 7.6-րդ կետերը, ինչպես նաև ՀՀ կառավարության 05.10.2017 թ. N 1227-Ն որոշման 2-րդ կետի պահանջը՝ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի.

- 7.1 կետում <<նոյեմբերի 15>> բառերը փոխարինել <<դեկտեմբերի 8>> բառերով,
- Հավելված N 1-ում՝ << պայմանագրի կնքման օրվանից՝ 50 օրացուցային օր>> բառերը փոխարինել <<2017թ. դեկտեմբերի 8-ը>> բառերով:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Կողմերի միջև կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ կառավարությանն առընթեր
քաղաքաշինության պետական կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի
գործառնական վարչություն
Հ/Հ 900011011997,
ՀՎՀՀ 02565827

Աշխատակազմի ղեկավար՝

_______________ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Գոռտեխպրոեկտ>> ՍՊԸ
ք.Վանաձոր, Վարդանանց 23/159
<<Ինեկոբանկ>> ՓԲԸ Վանաձորի մ/ճ
Հ/Հ 205022201763-1001
ՀՎՀՀ 06938925

Տնօրեն՝

_______________ Լ. Պողոսովա
(ստորագրություն)

Կ.Տ.